Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն 07

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<10>> սեպտեմբերի 2020թ. ք. Երևան

2020 թվականի սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,

Ա. Սահակյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,

Ա. Ստեփանյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար,

Ա. Մուսոյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության պետ, հանձնաժողովի անդամ,

Ա. Թումանյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,

Ա. Կարապետյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ.

Ն. Թևոսյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ.

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը:
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 5 հայտերի քննարկում:

2. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

3.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 4 հայտերի քննարկում:

4. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

5.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիայի ներդիր(ներ) ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

6. «Էլեկտրոմոնտաժ» ԲԲ ընկերության կողմից ՀՀ Կառավարության 15 փետրվարի 2007 թվականի «Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 690-Ն որոշման 6-րդ կետի պահանջի խախտման վերաբերյալ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրության քննարկում:

7. Անհատ ձեռնարկատեր Կամո Աղաբեկյանին տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

1. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր ստանալու համար ներկայացված հայտերի քննարկում

Քննարկվեցին՝

ԳԵՎՈՐԳ ԱՐՏԱՇԵՍԻ ԽԱՆԲԵԿՅԱՆԻ 24.08.2020թ., ԿԱՐԵՆ ՍՈԿՐԱՏԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻ 24.08.2020թ., ԿԱՐԵՆ ՍԱՆԱՍԱՐԻ ՍԱՀԻՆՅԱՆԻ 02.09.2020թ., ՌՈԲԵՐՏ ՎԱՐԴԻ ԹՈՒՆՅԱՆԻ և ՎԱՀՐԱՄ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՉԱՏԻՆՅԱՆԻ 02.09.2020թ հայտերը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր ստանալու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց ԳԵՎՈՐԳ ԱՐՏԱՇԵՍԻ ԽԱՆԲԵԿՅԱՆԻ 24.08.2020թ., ԿԱՐԵՆ ՍՈԿՐԱՏԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻ 24.08.2020թ., ԿԱՐԵՆ ՍԱՆԱՍԱՐԻ ՍԱՀԻՆՅԱՆԻ 02.09.2020թ., ՌՈԲԵՐՏ ՎԱՐԴԻ ԹՈՒՆՅԱՆԻ և ՎԱՀՐԱՄ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՉԱՏԻՆՅԱՆԻ 02.09.2020թ հայտերը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր ստանալու մասին:

Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ, գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին, որից հետո

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրեց՝

ԳԵՎՈՐԳ ԱՐՏԱՇԵՍԻ ԽԱՆԲԵԿՅԱՆ	7 կողմ, 0 դեմ
ԿԱՐԵՆ ՍՈԿՐԱՏԻ ՀԱՄԲԱՐՅԱՆ	7 կողմ, 0 դեմ
ԿԱՐԵՆ ՍԱՆԱՍԱՐԻ ՍԱՀԻՆՅԱՆ	7 կողմ, 0 դեմ
ՌՈԲԵՐՏ ՎԱՐԴԻ ԹՈՒՆՅԱՆ	7 կողմ, 0 դեմ
ՎԱՀՐԱՄ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՉԱՏԻՆՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Հանգեցին եզրակացության՝ ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածին և ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթների պահանջներին՝ ենթակա են լիցենզավորման:

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ կետի՝ եզրակացությունը ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիր ստանալու համար ներկայացված հայտերի քննարկում

Քննարկվեց՝

ՌՈՒԲԵՆ ՍԵՅՐԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ 26.08.2020թ հայտը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՖ N10981 լիցենզիայի ներդիր ստանալու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց ՌՈՒԲԵՆ ՍԵՅՐԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ 26.08.2020թ հայտը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՖ N10981 լիցենզիայի ներդիր ստանալու մասին:

Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ, գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին, որից հետո

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրեց՝

ՌՈՒԲԵՆ ՍԵՅՐԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Հանգեցին եզրակացության՝ ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածին և ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթների պահանջներին՝ ենթակա են լիցենզավորման:

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ կետի՝ եզրակացությունը ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

ՌՈՒԲԵՆ ՍԵՅՐԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ 26.08.2020թ հայտը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՖ N10981 լիցենզիայի ներդիր N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին :

Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ դիմումները և լիցենզիայի ու լիցենզիայի ներդիրների բնօրինակը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՌՈՒԲԵՆ ՍԵՅՐԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ կետի՝ եզրակացությունը ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

4.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտերի քննարկում:

Քննարկվեցին՝

ՄԱՐՏԻՐՈՍ ՕԴԿԻՆԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ 21.08.2020թ. դիմումը ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՖ N 03992 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին, ՄԱՍԻՍ ԵՓՐԵՄԻ ԵՐԻՑՅԱՆԻ 26.08.2020թ. դիմումը ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՖ N 02610

լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին, ԳԵՎՈՐԳ ԽԱՉԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ 08.09.2020թ. դիմումը ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՖ N 08658 լիցենզիան և լիցենզիայի N 00001 երդիրն ւժը կորցրած ճանաչելու մասին և Գոհարիկ Հովհաննիսյանի 27.08.2020թ. դիմումը՝ ՀՐԱՉԻԿ ԲԱԲԿԵՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ տրամադրված՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՖ N 00161 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ դիմումները և լիցենզիայի ու լիցենզիայի ներդիրների բնօրինակը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՄԱՐՏԻՐՈՍ ՕԴԿԻՆԻ ՁԱՔԱՐՅԱՆ	7 կողմ, 0 դեմ
ՄԱՍԻՍ ԵՓՐԵՄԻ ԵՐԻՑՅԱՆ	7 կողմ, 0 դեմ
ՀՐԱՉԻԿ ԲԱԲԿԵՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ /դիմումատու՝ Գոհարիկ Հովհաննիսյան/	7 կողմ, 0 դեմ
ԳԵՎՈՐԳ ԽԱՉԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ կետի՝ եզրակացությունը ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

5. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիր(ներ)ը ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

<<ԳՌԱՄ-ԳՐՈՒՊ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 03.09.2020թ. դիմումը՝ ՏԾ N 05241 լիցենզիայի N 00008, N 00024, N 00025, N 00032, N 00034, N 00035, N 00048, N 00051, N 00052 և N 00054 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը

Ներկայացրեց <<ԳՌԱՄ-ԳՐՈՒՊ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 03.09.2020թ. դիմումը՝ ՏԾ N 05241 լիցենզիայի N 00008, N 00024, N 00025, N 00032, N 00034, N 00035, N 00048, N 00051, N 00052 և N 00054 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԳՌԱՄ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ համաձայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ կետի՝ եզրակացությունը ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

6.«Էլեկտրոմոնտաժ» ԲԲ ընկերության կողմից ՀՀ Կառավարության 15 փետրվարի 2007 թվականի «Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 690-Ն որոշման 6-րդ կետի պահանջի խախտման վերաբերյալ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրության քննարկում:

Քննարկվեց՝

«Էլեկտրոմոնտաժ» ԲԲ ընկերության կողմից ՀՀ Կառավարության 15 փետրվարի 2007 թվականի «Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 690-Ն որոշման 6-րդ կետի պահանջի խախտման վերաբերյալ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրությանը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էր «Էլեկտրոմոնտաժ» ԲԲ ընկերության տնօրեն Ժ. Ղուկասյանը:

Ա. Ստեփանյանը

Ներկայացրեց, որ նշված գրության հիման վրա հարուցված է վարչական վարույթ՝ «Էլեկտրոմոնտաժ» ԲԲ ընկերությանը տրամադրված՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության N ՏՄՏՋ 00002 լիցենզիայի կասեցման համար: <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզավորված անձի կողմից լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ այդ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով նոր վայրում գործունեություն իրականացնելու համար նա լիցենզավորող մարմին պետք է ներկայացնի հայտ՝ նշելով իր՝ նախկինում ստացած լիցենզիայի վավերապայմանները, իսկ իրավաբանական անձինք՝ նաև պետական գրանցման համարը, ինչպես նաև գրավոր հայտարարություն՝ նախկինում ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին, եթե գործունեության իրականացման լիցենզիա տալու համար օրենքով կամ լիցենզավորման կարգով գործունեության իրականացման վայրի նկատմամբ հատուկ պահանջներ չեն սահմանվել, կամ եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Նույն օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե լիցենզավորված անձին գործունեության իրականացման լիցենզիա տալու համար օրենքով կամ լիցենզավորման կարգով գործունեության իրականացման վայրի նկատմամբ հատուկ պահանջներ են սահմանվել, ապա լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու վայրը կարող է փոփոխվել, կամ տվյալ լիցենզավորված անձն այդ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով նոր վայրում գործունեություն կարող է իրականացնել միայն գործունեության վայրի վերաբերյալ սահմանված հատուկ պահանջները բավարարող օրենքով կամ լիցենզավորված կարգով նախատեսված փաստաթղթերի ներկայացման դեպքում: «Էլեկտրոմոնտաժ» ԲԲ ընկերությունը փոխել է լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրը, սակայն այդ փոփոխության մասին չի տեղեկացրել լիազոր մարմնին, մինչդեռ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության վայրի համար սահմանված են հատուկ պահանջներ: Փաստորեն կազմակերպությունը լիցենզավորման ենթակա գործունեություն է իրականացնում լիցենզիայում նշված գործունեության վայրից դուրս /հարակից տարածքում/՝ այդ փոփոխության վերաբերյալ չտեղեկացնելով լիցենզավորող մարմնին՝ խախտելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի թիվ 690-Ն որոշման 6-րդ կետի պահանջները:

Հանձնաժողովը հանգեց եզրակացության՝ «Էլեկտրոմոնտաժ» ԲԲ ընկերությանը տրամադրված՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության N ՏՄՏՋ 00002 լիցենզիայի գործողությունը կասեցնել <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մինչև խախտման պատճառի վերացումը:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ կետի՝ եզրակացությունը ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

Հանձնաժողովի եզրակացության մասին տեղեկացվեց նաև հարցի քննարկմանը մասնակցող՝ «Էլեկտրոմոնտաժ» ԲԲ ընկերության տնօրեն Ժ. Ղուկասյանը:

7. Անհատ ձեռնարկատեր Կամո Աղաբեկյանին տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին

Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Կամո Աղաբեկյանին տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էր անհատ ձեռնարկատեր Կամո Աղաբեկյանը:

Ա. Ստեփանյանը

Ներկայացրեց Անհատ ձեռնարկատեր Կամո Աղաբեկյանին տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և պարզաբանեց, որ կազմակերպության կողմից ներկայացված դիմումը և բոլոր փատաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացվել են հանձնաժողովի անդամներին՝ ուսումնասիրելու և հանձնաժողովի նիստում կարծիք ներկայացնելու համար:

Հանձնաժողովի անդամները կրկին ուսումնասիրեցին ընկերության կողմից ներկայացված փաթեթը՝ տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ օտարերկրյա պետությունների կամ կազմակերպությունների կողմից տրված փորձաքննության դրական եզրակացության փաստաթղթերը, սարքավորումների վերաբերյալ ՀՀ տնտեսական զարգացման նախարարության Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից տրված ստուգաչափման վկայականները, արտադրական տարածքի հատակագիծը:

Անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված՝ ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշմամբ հաստատված կարգի հավելված 1-ի 9-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող օտարերկրյա պետությունների կամ կազմակերպությունների կողմից տրված փորձաքննության դրական եզրակացությունների և ՀՀ էկոնոմիկայի նախարարության Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից տրամադրված սարքավորումների ստուգաչափման տեղեկանքների համադրության արդյունքում լրացուցիչ պարզաբանման և ճշգրտման անհրաժեշտություն առաջացավ, ուստի Կամո Աղաբեկյանին առաջարկվեց ներկայացնել ստուգաչափված սարքավորումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն, որից հետո՝ հանձնաժողովի հերթական նիստում կքննարկվի Ա/Ձ Կամո Աղաբեկյանին տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա տրամադրելու հարցը:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
պատասխանատու քարտուղար Ա. Ստեփանյան